

# ՀԱՆԴԻՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Տ Ա. Ր Ե Բ Ք

Կ Ե Ն Դ Ա Ն Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

ՆԱԽՆԱԿԱՆ ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆՔ

1. Բնական մարմունց ընդհանուր բաժանումն . — Բնութեան մէջ գտնուող ամենայն մարմինք երկու մեծամեծ հոյք կը կազմեն, յօրոց մին Անգործարանաւոր և միւսը Գործարանաւոր դեռորինք կ'անուանին: Առաջնորդ կը վերաբերին մեռադր, ժայռ և բաստոյք: Այս մարմինք գործառնութիւնը կառապելու գործարաններ չոնին և մասանց վերաբրութեամբ կ'աճին: Կրնան պարզ կամ բաղադրեալ ըլլալ. 'ի բնութենէ՛ հաստատուն, հեղանիթ կամ օգային են. տևականութիւննին յանշափս է և աշխարհին ամէն կողմը կը գտնուին:

Խոկ Գործարանաւոր պետորիւնն այն տեսակ մարմիններ կը բաղկանայ՝ որոց սերունդքն իրենց ծնողաց կը նմանին. այսիպէն՝ կը ծնանին, կ'աճին, կը ծննդագործեն և կը մեռնին: Կ'աճին ներքուստ դէպ յարուար. միշտ հաստատուն մարմինք են, թէ և իրենց ներսու հեղանիթեր ալ կրնան բովանդակել. զիշաւորապէս երեք տարերքներէ կը բաղկանան, որք են ածիքածին, ջրածին և թթուածին:

Գործարանաւոր պետութիւնն երկու դրասակար կը բաժնուի, բնուական և կենցանական: Բնուականն ի բոււոց կը բաղկանայ, որք ստիրապար ոչ կը զգան և ոչ ինքնայօժար շարժմոնք կրնան կատարել: կենցանականն կենդաննեացմէ կը կազմուի, և յիշեան կը բովանդակէ ամէն գործարանաւոր մարմինները. ասոնք ստիրապար կը զգան և ինքնայօժար կը շարժին: Սովորապար կ'ըսենք, վասն զի կամ այնպիսի բայսեր, որք սեսակ մի զգացուութիւնն ունին (Ձև 1). Ե կենդաններ՝ ոք չեն կրնար ինքնայօժար շարժմունք կատարել (Ձև 2):

Զգործարանաւոր պետութիւնը կազմող այս երկու դրասակարաց վրայ, արդի բնապատումք երրորդ բաժանմէմ մի կը յաւերսն, այս է Նախնապայնք կոչաւածն, որ յինքեան կը բովանդակէ ստորին դասու ամենապարզ կազ-

մութիւն ունեցող այն ամէն գործանաւոր մարմինքն զորս չենք կրնար որոշել արդեաք կենդանեաց կը վերաբերին թէ բոււոց: Այսպէս են, օրինակ իմ Անգործարին Միքրոսպք:

Այս, բնապատմութեան այն մասն՝ որ անգործարանաւոր մարմնոցս կամ թէ ըսենք մետաղաց վրայ կը խօսի, Հանրապանութիւն կ'անուանի. կենդանեաց վրայ խօսող մասն՝ կենդանաբանութիւն. բուսոցը՝ Բուսաբանութիւն. իսկ շրբորգը որ կը խօսի այն էակաց վրայ զորս չենք կրնար որոշել արդեաք րոյս են թէ կենդանին կ'ախնաբանութիւն կը կոչուի:

Անգործարանաւոր մարմինները Անշունի մարմինք ալ կ'ըստին: իսկ Գործարանաւորը Շըմանցաւոր մարմինք: Հետանիք արդ որոշակի թէ ոչք են այն հիմնական տարրերութիւնք՝ որոցմով Անգործարանաւոր պետութիւնն ի Գործարանաւորէ կը զանազանի:


2. Անգործարանաւոր է Գործարանաւոր մարմիններու տարրերութիւնը. — Երբ անգործարանաւոր էակը գործարանաւոր կես բաղադրանք, մէկէն անթիւ տարրերութիւնը մեր աշաց առաջն կը ներկայանան: իրենց ծագումի, տարրաբանական բարագրութիւնը, ձեր, կազմուածքը և մինչև իրենց գոյուրեան կերպը, և փաթանի կամ փերզանաւուն եղանակը. կը տեսնուիք որ բոլորովին յիրերաց կը տարրերին:

Եւ յիրաւի, նշաւոր էակաց և անշունի իրաց ժագումը նոյն չէ. վասն զի մետաղք կամ որ և իցէ անշունի իրք, պարզապէս զանազան նիւթոց միութեանը կը ձևանան: Տարրաբանական յարակցութիւնը բաւական է անշունի մարմին մը յառաջ բերելու. այսպէս ծծումք և երկաթ իրերաց կես միանալով ծծըմբուկ երկաթոյ յառաջ կու գայ. որ ոչ ծծումք է և ոչ երկաթ, այլ բոլորպին նոր մարմին մի: Ընդ հակառակն կենդանին էակ մի կերպարանելու համար՝ սոսկ այդ նիւթոց բաղադրութիւնքն բա-

ւական չեն, այլ միշտ նշաւոր է ակ պէտք է՝ որ  
իրեն նմանը կարենայ ծննդագործել:

Ննջաւոր և անշունչ մարմնոց տարրաւարահա-  
կան բաղադրութիւնն նոյն չէ. վասն զի թէ և  
զնջաւոր մարմինս բաղկացրնող տարերք, ա-  
բէնքն ալ անշունչ մարմնոց մէջ կան, սակայն


այս տարերաց կազմած բաղադրութիւնքն մի և  
նոյն տարրաւանական յատկութիւնները չու-  
նին: Ավկից զատ, գործարանաւոր մարմնոց  
տարերքն շարունակ նորոգութեան մէջ կը զբա-  
նուին, մինչդեռ անգործարանաւորաց՝ բնաւ  
իսկ փոփոխութեան ենթակայ չեն:



Զե. 1. Դիմեա Շանճորսակ

Իսկ իրենց ձեռյն գալով, անշունչ մարմնոց  
որ և իցէ ձև կրնան առնուլ: Այսպէս օրինակ իմն,  
տարօրինակ ձեռով քարի կտոր մի ժայռէ կը

կ'ողորկանայ, ձեր կը փոխէ. այսու հանուերձ  
մարդու իշխանութեան ներքեւ է, և ուզածին  
համեմատ զայն կը ձեւափոխէ առանց իւր էւու-  
թիւնն կորոնցրնել տալու: Ընդ համառակն,  
ննջաւոր մարմնոց որոշեալ ձև մ'ոնին, և այս  
ձեր կամ ձեւոց շարքը, որ յատուկ է իւրաքան-  
չիւր էակաց, թէպէս տարիենուն համեմատ  
յաճախ զայն կը փոփոխին, հաւասարապէս իւ-  
րենց յատկութեանց մի մասն կը համարի: Կեն-  
գանեաց տեսակ մի միւս տեսակէ իւր ձեռվն  
կը տարերի: Եւ գարձեալ, ննջաւու էակից ան-  
շունչ էակաց պէս՝ ներքուստ նմանամանն կց-  
տէ ձևացած չեն. և այնպիսի նիւթերէ չեն  
բաղկանար՝ որք մասնըկական վիճակի մէջ միայն  
մասն:



Զե. 2. Բառակ

Գրթի. այլ կամաց կամաց կարծրագոյն քարե-  
րու շփուելով լրոց մէջ թաւալելով, և այն,

Ննջաւոր և անշունչ մարմնոց մի և նոյն կազ-  
մանացք չունին: Նախ և առաջ անշունչ իրերը  
ներքուստ անգործարան են, որով Անգորժա-

բանաւոր մարմինը կր կոչուին. իսկ չնշաւոք՝ մասնաւոր գործարաններէ կազմեալ են, և այնու իրենց նպատակին կը ծառայեն, և Գործարաննաւոր մարմինը կանուանին : Երկրորդ, ինչպէս ըսինք, գործարաննաւոր էակա գործարանները՝ անշունչ մարմնոց մասնաց պէս այնպիսի նիւթերէ չեն բաղկանար՝ ողբ յարառե մասնը կախան վիճակի մի մէջ մնան : Անգործարաննաւոր՝ համաստ. մասնիկներէ, կամ տարեց վրայ խօսերով հիւլէներէ բարձացած են. և այս մասնը կամ հիւլէներէ մին՝ տարրարաննական ինչ յատկութիւն որ ունի, մի և նոյն յատկութիւններ ունին նոյն մարմնոյն ամէն մասնիկն և կամ ամէն հիւլէներն : Ընդ հակառակն, գործարաննաւորք՝ անընդմիջական սկզբունքներէ և առնազան նիւթերէ կը բաղկանան, որ և ամէնը անհրաժեշտ կարևոր են իրենց կազմութեան համար. իսկ հիւլէն կամ մասնիկը՝ առողջ մէջ երկրորդական բան մի կը համարի : Կենդանին էսակը բազմաթիւ հիւսուածներէ ձևացած ըլլապոյ անդամազննական յատուկ կազմութիւն մ'ունին . և այս հիւսուածներու իրաքանչիրին յատկութիւններն իրենց եղական են, և այնու յայլոց կը տարբերին :

Հուսկ ուրեմն գործարաննաւոր և անգործարաննաւոր էակաց գոյուրեան կիրու և իրենց փականներ կամ վերջանարուն եղանակը նոյն չէ : Եւ յիրակի, անգործարաննաւորք՝ անկարի էութիւն մի յունին . այլ ազգակաց գործունէութեան ենթակայ են, և ստոյդ անգործունէութիւն մի իրենց վրայ կ'իշխէ : Առանց մասնելու կ'ածին, պարզապէս նորանոր մասնրկաց վերադրութեամբ. և միանգամ կազմուելու ու ձևանալէ յետոյ երկար ատեն կը ունեն, մինչև որ արտապին գործութիւն մի զիրենք այլափոխէ : Սակայն գործարաննաւորք այսպէս չեն. կենաց հետ ՚ի միասին, որ իրենց ծնողացմէ ընդունած են, ունին միանգամացն անդադար գործունէութեան կարողութիւն մի : Արտապին մարմնոց վերադրութեամբ չեն աճիր, այլ մասնելով, և սահմանեալ միջոցէ մի յետոյ ընթացքնին կատարելով կը վերջանան :

ԱՌԱՐԵՆՑ ԵՒ ԲԱԺԱՆՈՒՄՆ ԿԵՆԴԱՑԱՐԱԿՈՒԹԵԱՆ

3. Վերն ըսածնուս համեմատ, Բնապատմութեան այն մասն որ կենդանեաց վրայ կը խօսի՝ կենդանաբանութիւն անունը կը կրէ : Արդ, թէ և այս գիտութիւնն ընդարձակ է և շատ մասօր կինայ բաժնութիւն, սակայն գիտարար զատոնք երեքի կը նանք վերածել. այսինքն են Գործարանագրութիւն, Բնախօսութիւն և Դասարանութիւն :


Ա. Գործարանագրութիւն կամ կենդանագրենութիւններէ՝ կազմաբանական տարերց և կենդանական կամ տարրական հիւսուածոց ընտութիւնը կը զննէ : և այս կիւսուածներէն յատաշ եկող բազմադեալ գործարանաց կազմութիւնը մեզ կ'ուսուցնէ : Այս մասն երկու կը բաժնուք. Հիւսուածարանութիւնն որ կենդաննաց մանրադիտական մասնաց վրայ կը խօսի, և Անդանացնութիւնն որ գործարանները կը նկարագրէ :

Բ. Բնախօսութիւնն կը քննէ իրավանչիր գործարանք մին եղանական իրենց պաշտոնը կը կատարեն . ու մի և նոյն գործարանք զանազան կենդաննաց մէջ ինչ տարրերութիւնն ունին :

Գ. Իսկ ֆասարանութիւնն կամ ֆասակադրութիւնն զգենդանին մասնաւոր ոճով զանազան լու արուեստը կը սորթեցնէ :

Ասոնցմէ զատ՝ կենդանաբանութիւնն ըստ ուսուած կրնայ բաժնութիւն նաև ՚ի կենդանագրութիւնն, ՚ի կենդանագրութիւնն, ՚ի կամակից կենդանաբանութիւնն, ՚ի գործնական ինդրանիկանութիւնն, ՚ի կենդանաբանական աշխարհագրութիւնն :

Մենք առաջիկաց Տարերքս զինաւորաբար երկու մասն կը բաժնենք. առաջին մասին մէջ՝ Գործարանագրութիւնն և Բնախօսութիւնն ՚ի միասին առած՝ անոնց վրայ պիտի խօսինք. իսկ երկրորդին մէջ միայն կենդաննաց ֆասակադրութեան վրայ :



## ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԳՈՐԾՄԱՐՑԱՎԱՐԻԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԽՈՍՈՒԹԻՒՆ

### ԳԼՈՒԽ Ա.

ԿԱԶՄԱԲԱԿԱՆ ՏԱՐԵՐՔ ԵՒ ՏԱՐՐԱՎԱՆ  
ՀԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

4. կազմաբական տարերք. — Այսնայն գործարանաւոր էակաց, թէ բուսոց և թէ կենդանեաց կազմաբանական առաջին տարրն է խորչ (Ձև 3. 4. 5): Այսկայն ՚ի մէջ բուսոց և



Ձև 3.



Ձև 4.



Ձև 5.


Չափազան երեսիթք խորչը

կենդանեաց այս տարբերութիւնն միայն կը նկատենք, որ ՚ի բուս այս սկզբանկմն խորչի վիճակը մշտատե է, իսկ ՚ի կենդանին անցողական և առժամանակեաց ըլլալով՝ կրնանք ըսել թէ պարզապէս իրենց քանի մի գործարանաց մէջ կը մնայ, ինչպէս ՚ի գեղձս։ և կամ ամենասպարզ կազմութիւն ունեցող կենդանեաց մէջ ինչպէս, օրինակ իմ ՚ի ջրաճճու: Այս գործարանաւոր տարրը կենդանւոյ սազմացին վիճակէն սկսեալ այնքան զանազան այլափոխութիւն կը կրէ, զորս մէկիկ մէկիկ ասորագրեն անհնար է:

Խորչին իրենց մէջ յատուկ մննդարար հեղանակիթ մի կը բովանդակին, որ սաղմանոյժ ՚ի անուանի. և այս է որ իրենց մննդեան և աճման կարեւոր եղած նիւթերը մատակարարելով՝ զիրենք կը բազմացնէ և կ'աճեցնէ: Եթէ զարգմանարոյթը մանրագիտի զննելու ըլլանք, իւր մէջ նրբագյու փոշիներ կը նկատենք՝ որք սարազ անօրչեր են:

Խորչը երկու զանազան եղանակով կը բազմանան, հեղանակը և եղած ներկաւիք չերձանաք՝ երբ խորչ մի անելով կամաց կամաց երկու կը բաժնուի, և հետո չետք անմը ևս ուրեւ խորչը կը վերածուին: Ներածնեցնաւիք՝ երբ խորչի մէջ կը սկսին ուրիշ բազմաթիւ փոք-

րիկ խորչեր ձևանալ (Ձև 6): Խորչերը նախաւի խելով երբեմն չկարս ձև կը ստանան, ինչպէս ՚ի վերնամաշչը. երբեմն կ'երկլըննան և կրկին ու կրկին մազմզուկներ բաժնուելով տրցակներ կը կազմեն, որ նեարքը կ'անուանին. և երբեմն ևս բազմաթիւ խորչեր մի և նոյն գծի վրայ չարտելով գիրար կը ջշափեն, որով կամաց կամաց իրենց ջրապատը եղծանելով խորդիվ (Ձև 7) մի կը ձևացընեն. այս խորդիվական ժամանակաւ, իւր ապագայ փոփոխութեանցն համեմատ՝ կամ ապավիժիչ փող և կամ անօթ մի կ'ըլլայ:



Ձև 6.

Ներածնութիւն խորչը



Ձև 7.

Ապօթք

Ուրեմն, այս ըսածներն էս կը հետեւի որ ըդգործարանաւոր էակս բազմացընող տարբեր են խորչ, շլյուզ, նեարք և խորդիվակ. սակայն եթէ ոք ուշի զննէ այս տարբեր ծագումը, կը տեսնէ՝ որ ամէնքն ալ խորչ յառաջ կու գան, և միայն խորչն է յատկապէս կազմաբանական տարր՝ ամենայն գործարանաւոր հիւսւածաց:

5. Տարրական հիւսւածածք. — Վերցիկեալ գործարանաւոր տարբեր այլ և այլ եղանակաւ իրերաց հետ միանալիքն՝ զանազան յատկութիւններ ունեցող տարրական հիւսւածքը կամ պարզ գործարակ անուանեալ զանգուածներն յառաջ կու գան, և կենդանեաց մարմույն զանազան մասանց գործարանաւոր բաղկացութիւնն ասոնցնով կը ձեւանայ: Այս հիւսւածքը բազմաթիւ են, և յարդիս ընդհանուր կերպով նախ երկու կը բաժնուին, այսինքն՝ ՚ի հենականին և ՚ի կենդանականին կենաց հիւսւածքը:

Առաջինք տեխնիք կենաց ՚ի ըստին, վասն զի կենդանեաց հաւասար՝ բուսոց մէջ ալ կ՛ը զըստին. և կամ գննեա անոնց համապատասխան հիւսւածքն ասորչեր բուսոց մէջ ևս կը նկատենք: Յետինքս կենդանականի կենաց կը կոչուին, վասն

զի միայն կենդանեաց մէջ զանոնք կը տեսնենք։  
Տնկային կենաց հիշուուած։ — Տնկային կե-  
նաց հիւսուածքն են վերնամշային, անօրա-  
յին, գեղային, շարակցական, առաջական,  
եղիկային, ուլրային, պատենային, և այլն։

Վերնամզային հիշուուած։ — Այս հիւսուածն  
վերնամզային կոչուած է, վասն կենդա-



Զւ 8.


Անօթային հիւսուած

քանախ, իսկ երբ ներ-  
քին խոռոշները ծածկէ՝ վկրնամշ կ'ըսուի։  
Զայս բաղկացընող խորշեր իրենց դրից հա-  
մեմատ եղիկային հիւթ մի կ'արտաքրեն, որ  
խտանալով կը ձևացընէ զմազ, զփետուր, գե-  
ղունք, գեղջիր, և այլն։

Անօթային հիւսուած։ — Անօթային հիւսուա-  
ծըն յատուկ նիւթերէ բաղկացեալ՝ կոյուոր  
բազմաթիւ անցքերէ կը ձեւանայ, որք ծառոց  
ճիւղերու նման հետզհետէ կը բաժանին և կը  
սուրարսմանին (Զւ 8)։ և իրենց նրագոյն  
ճիւղասորութեամբ մարմնոյն ամենայն մա-  
սանց մէջ տարածուած և ցրուած են։ Քանի  
մի յատուկ հիւթեր իրենց շրջանը այս անցքից  
կամ անօթոց մէջ կը կատարեն, և այն պատ-  
ճառաւու վերցիշեալ անօթք յարինեական, 'ի  
մասնացքը և յաշայինք կը բաժնուին, ըստ  
որում իրենց մէջ արին, մասնաւ կամ արի  
կ'ընթանայ։ Դարձեալ յարինեական անօթու ա-  
նոնք որ զարիւնն արտօ առնըլով մարմնոյն զա-  
նազան մասանց մէջ կը տարածեն՝ շնչիրակը  
կ'աստանին։ ընդ հակառակն այլք որ զա-  
րինն մարմնոյն այլ և այլ կողմերէն ժողվելով  
ի սիրտ կը մերեն՝ երական։

Գեղային հիւսուած։ — Գեղային հիւ-  
սուածն փոքրիկ գնդակներէ կը ձեւանայ՝ որք  
ողկոզի հաստիներու նման զօղոնեիներով ի-  
րերաց հետ կը միանան։ Այս գնդակը գեղջի-  
անունը կը կրեն (Զւ 9), և այլաձև կոյուոր կը  
կազմն, Նյոն գեղջերէ շատ հիւթեր կը ցատու-  
ամին, յորոց ումանք՝ ինչպէս տողուկ, մազ, և  
այլն, քանի մի գործառութեանց մէջ օգտա-

կաք են, այն պատճառում կը մասն 'ի բնու-  
թեան. իսկ այլք, օրինակ իմն՝ մէզ, վիրան,  
և այն, 'ի բնութեան անօգտակարով ըլլալով' 'ի  
մարմնոյ արտաքս կ'ապավիժին։



Զւ 9. Գեղային հիւսուած

Շարակցական հիշուուած։ — Շարակցական  
հիւսուածն, որ 'ի բնութեան կարեռագոյն հիւ-  
սուածոց մին կը համսրոի, լաւագոյն է շա-  
րակցական հեղանիթ անուանել։ Աթէ զասի-  
կայ մանրպիտիւ զննելու ըլլանք՝ իր մէջ  
նրագոյն և բազմաթիւ երկայն շերտեր կը նը-  
կատնէք։ Կենդանեաց գործարաններու մէջ ա-  
մենայի առասութեամբ կը գտնուի. նմանա-  
ման կամ յաճախ նաև նեարդապատթազան-  
թաց կը նմանի, և կը պատէ զիթզ, զմկուն,  
զնուօթ և զգեղդա։ Զանազան գործարաննաց  
ներքին բարակութեան մէջ թափանցեցով ա-  
նոնց մասունքն իրերաց հետ կը միացնէ, զա-  
նոնք կը պատէ, և զիթզն իրենց տեղը հաս-  
տառուն կը պահէ։ Այս պատճառաւ ահա շա-  
րակցական հիշուուած անուանեցաւ։

Վերյիշեալ հիւսուածը կազմող անթիւ շեր-  
տերն այնպիսի եղանակաւ շրուուած են, որ  
մէջինին անդրսպատ կը թողուն, որք և նար-  
պով կը լցուին, ուստի նաև ձարպային նիւ-  
տուութիւն կը ձևանայ։

Առագափան հիշուուած։ — Առագափան հիւ-  
սուածն նրագոյն որդրածն նեարդներէ կը բաղ-  
կանայ, որք վերին աստիճանի ձգուականու-  
թիւն ունին։ Այս յետին յատկութեամբ ևեթ  
'ի շարակցականէ կը տարբերի. իսկ միւս յատ-  
կութեամբ անոր շատ կը նմանի։ Շարակցա-  
կանի հետ մեխոն՝ զմակ կը բարձացնէ. ա-  
րիւնական անօթոց կամ թէ ըսենք շնչերակաց՝  
միջնն թաղանթը կը յօրինէ, և ասոնց պնդու-  
թեան և առաջնութեան պատճառ ինքն է.  
զյօդասորութիւն կը կազմէ, և այլն։

Եղջերային հիւսուած։ — Եղջերային հիւսուա-  
ծըն այնպիսի հիւսուած մի է՝ որ միաներէ բո-  
լորպին կը տարբերի։ Աստի յօրինեալ են Ե-  
զանց, Ոչսարաց, Այժերու և այլ ամենայն որու-

նող կենդանեաց եղիւրքն: Դարձեալ մի և նոյն հիւսուածը զանազան փոփոխութիւնք կրելով կը կազմէ զեղունգ, մող, հերք, ջեռուոց թեփեւութիւն, կետերու եղերասամունքն, թոշնոց կուուցն, փետուրները, և այլն:

Եղերային հիւսուածն՝ որ թէպէտ պինդ է և նոյն իսկ երբեմն քարեղէն երևոյթ ունի, գըլխովին գործարանաւոր նիւթէ կը բաղկանայ: Այս նիւթու այսպէտ ըսերով վերամզային հիւսուածի խորչերէն յառաջ կու գայ, զոր եթէ կիզունք՝ յասուկ հու կ'արձակէ, և սակաւագոյն քանակութեամբ մոխիր՝ իրը մնացուած կը թողու:

Ուկրային հիւսուած. — Ի մարգս և 'ի առնաւորս առա առասարակ, 'ի թռչունս, 'ի Զեռունս, յերկակենցառ և 'ի Զկունս, շարք մի կարծրագոյն և գրեթէ քարեղէն մասունք կը գտնուին՝ որք ասեր կը յորշըլին և իրենց ամբողջութեամբ կմախք կը կազմեն: Զասիկայս ձևացնող հիւսուածն սեփական քարեղէն նիւթէ կը բաղկանայ, որ յասուկ անուամբ ուկրային կը կոչուի շարակցականէ շարարերող հիւսուածի մի մէջ ցրուած է, և կրային հիմն ունեցող աղերէ կը բաղկանայ:

Ուկրու երկու տարբեր նիւթերէ կը կազմուի, 'ի գործարանաւորէ և յանդորրաբանաւորէ: Երբ զասոնկ յիթերաց բաժնեւ կամենանք՝ բաւական է փել մը ատեն թողուզ զոսկը թթուուտացեալ յոյն մէջ, որով աղերը կը լուծուին և միայն շարակցական հիւսուածը կը մընայ, որ ոսկեր մէջ առատութեամբ գտնուելուն պատճառաւ: Իր քանակն և ձեւը կը պահէ: Սակայն եթէ յետին յոյն մէջ եփենք՝ բոլորովին 'ի դոնդոյ կը փոխարկի:

Ուրիշ եղանակաւ մ'ալ վերոյիշեալ երկու մարմինք յիթերաց կրնանք բաժնեւ: Այսպէս, եթէ առանունք ոսկոր և օդոյ մէջ կիզունք՝ գործարանաւոր նիւթը բոլորովին կը ննջուին և միայն աղք կը մնան:

Ուկրային նիւթն՝ ոսկրային կոյսի ամենայն մասանց վրայ մի և նոյն ժամանակ յի ձևանար: այլ զանազան կեդրններէ սկսելով, որք ուկրացնան կետեր կ'անուանին (Ձև 10), կը ճառագայթէ և միւս մասանց վրայ կը տարածուի:

Ի նորածին կենանիս 'ի սկզբան ոսկերը մի և նոյն պնդութիւնը շունինք ինչ որ յետոյ ժամանական կը ստանան, այլ կասուու են և դիւրակոր. այսինքն է, ամառուս վիճակի մէջ կը գտնուին. և այս վիճակի մարմնոյն քանի մի մասանց մէջ ցիւնանս իսկ կը յարաւածէ:

Պատնենային հիւսուած. — Կան քանի մի կենդանիք որոց գործարանաց մէջ այլ հիւսուած մի կը նկատենք, յորում առատութեամբ կրային մետանակ, կը գտնուի, իսկ գործարանաւոր նիւթ ամենաքիչ: Ասկիկայս պատնենային հիւսուած անոնը կը կրէ, և իրմով կը բաղկանան կակա-

մորթից խեցիները, Խեցքետեաց պատեանքը, բուսուսերու բջջն, և այլն: Այս հիւսուածս որ իւր մէջ առաւատ կիր բովանդակելուն պատճառ գրեթէ բորբովին քարեղէն է, կրաքարի նման պաշմմանք թթուուտներու մէջ կը լուծուի. և խորովելով իւր մէջ բովանդակուած քիչ քանակութեամբ գործարանաւոր նիւթը կը կորունցնէ, և գրեթէ իւր քանակին շափ կենդանի կոյս յաւելուած մի կը թողու:

Կենդանական կենաց հիւսուածք. — Կենդանական կենաց հիւսուածքն են՝ մկնային և յրդային:



Ձև 10. Ուկրային հիւսուած

Մկնային հիւսուած. — Մկնային հիւսուածն՝ որպէսքական անուամբ միս կ'անուանենք, յառածգական նեերդից կը բաղկանայ: Այս նեերդը երբեմն կամաց յօժարութեամբ, և երբեմն զրգումամբ կը կծկին և կ'ընդպարձակին, և հետևաբար հետոցիւտէ այլ և այլ անդամոց շարժմունք կը պատճառեն: Այս նեերդներն՝ կարծես տեղ տեղ քանի մի գործարանաց մէջ կը կորսուին. բայց յաճախ զուգակեռական դըրիւք երերաց հետ կը միանան և տրացեներ կը կազմեն որք մկուեթ կ'անուանին, ինչպէս բազկաց, արոնից (Ձև 11), և այլն: Ի բարձրագոյն կենդանիս կարմիրթութիւն գոյն ունին՝ որ իրենց յասուկ չէ, այլ ամենայն ուղղութեամբ մէշերնէն անցնող բազմաթիւ արիւնակալ անօթներէ յառաջ կու գայ:


Զայային հիւսուած. — Զայային հիւսուածն՝ նըրբագոյն խորովակաց միախմբութենէնք կը ձևանայ, որք իւն կակուղ, պարարտ և սովորաբար սպիտակագոյն նիւթով: Ասկնել զայային նըրբարարներ կը կրուին, և ժողիկը անուանեալ՝ գրեթէ բոլորանեւ քանի մի խորշաւոր կոյսերէ կը ծագին: Արդ, մի և նոյն հիւսուածէ բաղկա-

ցած են ուղեղ, ոլնածուժ, և այն սպիտակ նըրք-  
բագոյն լրտերն՝ որք՚ի վերայիշեալ դորժարանաց  
կը մեկնին և յատկապէս ջիզ անոնը կը կրեն։

Ենդանեաց մէջ լիդք ըստ իրենց ծագման՝  
կամ արտաքին մարմնոց իրենց գործարանաց  
վրաց ըրած ազդեցութիւնը զգալու կը ծառա-  
յեն, և հետեւարար անոնց որպիսութիւնը կ՚-  
մանան. կամ այլ և այլ անդամոց շարժունք կը  
պատճառեն ըստ կենդանուցն կամաց յօժարա-  
թեան, և կամ դարձեալ, այսպէս ըսենք, ա-  
ռանց կենդանուցն դիտակցութեան, տնկային  
կենաց գործառնութիւնքը կը կանոնարեն,  
ինչպէս զմարասողութիւն, զրչան արեան, և  
այլն։

6. Հիւրք. — Հուսկ ուրեմն, որպէս զի յի-  
շատակած ըլլանք կենդանեաց գործարանաւոր  
կազմութեան մէջ գտնուող ամենայն նիւթերը,

կը յաւելունք որ վերոցիշեալ հիւսուածներէ զատ  
կան նաև եզական հիւթեր ալ: Եւ հիւ կ'ը-  
սուին այն ատենայն հետանիւթք որ կենդանեաց  
գործարանաց մէջ կը գտնուին և սահմանեալ  
պատօն մի կը կատարեն. այսպէս են օրինակ  
իմն մամաց, արիւն, աւիշ, մաղձ, և այլն, որք  
թէ էութեամբ, թէ ծագմամիւն և թէ պաշտօնիւ-  
թիւրքաց յաս կը տարրերին: Սակայն յայտ է  
որ այս ամէնքն թէ հիւսուածք և թէ հիւթք,  
ամէն կենդանեաց գործարանաց մէջ հաւա-  
սարապէս չեն գտնուիր, այլ բազարբեալ կազ-  
մութիւն ունեցող բարձրագոյն կենդանեաց  
միայն կը վերաբերին, որք միանգամայն բազ-  
մաթիւ և զանազան յատկութիւնք ունին. կամ  
թէ ըսենք այն կենդանեաց մէջ կը նկատենք՝  
որք՚ի կենդանաբանական շարս բարձրագոյն  
աեղիքը կը գրաւեն։



Զւ. 11. Մկային հիւսուած (Մկունք թիկանց և պարանոցի)

1. Տրավից: 2. Նվթագանկան մուկն: 3. Փոչ ուսուկեր: 4. Աւածայու մուկն: 5. Տէլցայան մուկն: 6. Են-  
թափշային մուկն: 7. Փոքր բուրքանե մուկն: 8. Աւագ բուրքանե մուկն: 9. Աւագորնային մուկն: 10. Ջրուած  
աւագորնային մուկն: 11. Աւագերասանաց մուկն: 12. Ենանկիւսային միջոց ասհմանաւորեալ ՚ի յետակողմանէ  
աւագորնային մուկն և ՚ի յուսաշնկողմանէ մէն խոտորունէ մուկն: 13. Մեծ խոտորուն մուկն: 14. Երիկունանէ  
մուկն: 15. Անկենաւոր մուկն: 16. Փոքր լիշանկիւսային մուկն: 17. Լիշանկիւսային մուկն: 18. Ենթափշային  
մուկն: 19. Աւագուտանանէ մուկն: 20. Ստորին անկին ուսուկեր: 21. Գրած փոքր ասումանէ մկանց: 22.  
Ստորին փոքր ասումանէ մուկն: 23. Փոքրիկ խոտորուն մուկն: 24. Գագամին կը ուսուկեր: 25. Միշերասանաց  
մուկն: 26. Բրգան. մուկն: 27. Վերեակողման երկուորեակ մուկն: 28. Խառամից մուկն: 29. Ստորակողման  
երկուորեակ մուկն: 30. Բարձրից շորերկուու մուկն: 31. Մեծ կազ օրբանազգերային մկան: 32. Ազդերային  
խնդրաւուց: 33. Կցումն աւազաւամանէ մկան: 34. Փոքր թաղանթեակ մուկն:

## ԳԼՈՒԽ Բ

ԳՈՐԾՎ ԿԵՆՍՑ ԵՒ ԶԱՌՈՒ ԿԱՏԱՐՈՂ ԳՈՐԾՎԱՅԱՔ

7. Բաղադրեալ գործարսներ. — Վերոյիշեալ պարզ գործարսներ՝ կամ ամբողջովին և կամ անոնցմէ մի քանիք զանազան եղանակաք իրերաց հետ միացանքվ՝ կը կազմեն զրադաշտեալ գործարան։ Նթէ ասոնցմէ որ և իցէ մին զընելու ըլլանք. կը տեսնենք որ յայց և այլ հիւսուածոց որ կը ձեւանայ՝ զրոյ պարզ գործարսներ անուանեցինք։ Օրինակ իմն շաբաթ՝ շատ անգամ բացացեալ է գեղջային հիւսուածէ՝ որ հատերը և մազքի կղկիանքը կը կազմէ շարակցակա հիւսուածէ՝ որ մի և նոյն ժամանակ զատու կ'անջատէ և կը միացընէ, և միանգամայն արտսաքուաս բոլոր գործարանը կը պատէ. ըդէրէ և յարիւմակա անօրներէ՝ որ նոյն գործարանը մէջ ցրուած են. և մազդ կ'անջատեալ հիւթէ՝ որ մի և նոյն լեարդի պատուցումն է։

8. կազմանաք. — Լենսական երևոյթք՝ մեծաւ մասսամբ մէկ գործարանի ձեռքով միայն չեն կատարուիր, այլ ՚ի միասին հաւաքեալ քանի մի գործարանաց բաղադրեալ և ներդաշնակ գործունէութենէ յառաջկու գան։ Այս պատճառաւ անդամազնինք որոշեցին նաև զկազմարան։ կամ թէ ըսենք կազմարան անուն տուին զանազան բաղադրեալ գործարանաց ամբողջութեան որք գործառնութիւնն մի կատարելու կը ծառային։ Այսպէս իւսեմն մարտարքեան, շարժուրեան կազմարանը կ'անուանին այն գործարանաց ամբողջութիւնք՝ որք համանուն գործառնութիւնն մի կը կատարեն։

9. Գործառնուրիւնք. — Գործառնուրիւնք կը կոչուին մէկ կամ աւելի գործարանաց գործունէութիւնը՝ որք ՚ի բնութենէ կենսական որշեալ պաշտօն մի կատարելու սահմանուած են։

Բաժանուանն գործառնուրեանց. — Ի գործառնութեանց ոմանք անհատի կենաց պահպանութեան և տեսակի անմնան կը ծառայեն. և որովհետեւ սոսնկը կենսանեաց և բռուց առհասարակ են, գործառնուրիւնք գործարանաւոր կամ տնկայի կ'հանց կ'անուանին։ Ա. Աք ըզգայականութեամբ և կամաւոր ըզգմանմբ զանհատն իրեն շրջակաց էակաց հետո վերաբրութեան մէջ կը պահեն. և իրեն որովհել կու տան, երբեմն սոսկապէս բնագդմամբ և երբեմն գերագոյն իմացականութեամբ՝ օգտակարն՝ ՚ի վրանակար. և ատոնք գործառնուրիւնք կենդանական ինեան կամ առնուրեան կ'անուանին։ Սակայն թէ յետինք և թէ առաջնիք իրերաց հետ սերեւ յարաբերութեան մէջ են, ինչպէս նաև զիրենք բաղկացընող գործարաններն։

Կենդանական ինեան գործառնուրիւնք. — կենդանական կենաց գործառնութիւնք, կամ թէ.

ըսես լաւագոյն ըսելով՝ կենդանական կենաց յատկութիւնքն են Զգայականութիւն և Շարժութիւն։

Ակախն արդ իւրաքանչիւրին վրայ կարգաւ խօսիլ։

## ԳԼՈՒԽ Գ

ԾԱՌԱԴ

10. Անունը. — Անունը գործառնութիւն միէ, որ կենդանայն կեանքը կը պահէ. և որպէս զի իւր գործարանն կարենան անիլ պէտք եւ զած կարեոր նիւթերը կը կազմէ, և հանապազօրեայ կորուսովն կը լուս։ կենդանին ՚ի բնութենէ ստացած միջոցներով ՚իւր մննդեան կարեւոր եղած պիտոյքը կը հայթայթէ, և զանոնք այնպիսի պատրաստի գործողութիւնաց կ'ենթարկէ՝ որք վիրույժեալ մննդարար նիւթեց կ'երանցց յոսուակիր մէջ մուտքը կը դիմացնեն։ Եթեայ էտք է որ այս կերակուրք պատշաճապէս լուծուելով ՚ի մի զանդուած փոխարկին՝ ուսկից անօքտակազմը յօգտակարաց անշատին։ Այսու ահա յետինքու մարմնոյն այլ և այլ գործարանաց մէջ կը բաշխուին և անոնց աննդեան կը ծառայեն. իսկ առաջնինք որ սննդարար նիւթերէ գլխովին մերկացած են՝ ՚ի մարմնոյ արտաքս կը մղուին։

Անդարար նիւթերն հուսկ ուրեմն յարին կը փոխարկին. և այս արիւնն է որ սուէպ ըստէպ գործարաններէ անցնելով վիրույժեալ բայխումը կը կատարէ. բայց որպէս զի իւր պաշտօնը վիրատին կարենայ զէկէ կերպով կատարել, երբեմն երբեմն նորոգուելու համար մթնոլորտային օդոյ հետ կը հատորդակցի։ Այսպէս կերակուրն յարին կը դառնայ և արիւնը մարմնոյն ամէն մասանց մէջ տարած ուելով նոյն մասանց հետ կը նոյնանայ, կամ ինչպէս բնախօսք կ'ըսեն կ'իւրանայ։

11. Կերակուրը. — Կերակուր կը կոչուին այն ամէն նիւթերն որ կենդանայոյ մը մարմնոյն մէջ մտնելով ՚իւր ամսնակ կամ հանսպագօրեայ կորըստեանց անցքը լեցրնելու կը ծառային։ Ի ոռփարական խօսակցութեան կերակուր ըսելով ուստի նիւթերը կը հասկնանք որք մեղի ունոնդ և կեանք կու տան։

Մարդուս մարմնինը բաղկացընող տարերքները բաղմանթիւնն են, օրինակ իմն ածխածին, լրածին, թթուածին, ծծուածին, լուսածին, քլոր, մանիչ, կրածին, կաղին, նատրոն, երկաթ, և այլն. ուրեմն՝ որպէս զի կարենանք աղէկ կերպով մանսնիլ և մեր մարմնոյն զանազան անդամներն իրենց կարևոր եղած անումը և զարգացումը կատարելապէս ստանան և կորսանանց տեղը լուս, պէտք է որ կերպ կերակուրնին վերոյիշեալ նիւթերը իրենց մէջ բովանդակակեն։

Աստի յայտնապէս կը տեսնուի թէ մարդս միայն մէկ տեսակ կերակրով առողջարար սնունդ մի չի կրնար առնուլ:

Կերակրութերն ըստ իրենց տարրաբանական բազադրութեանց՝ երկու կամ թէ ըսենք առաւաեն երեք գասու կրնան վերածուիլ, և են երկար, երեսակ և տեսակ կերակրոց անուանեաբն: Երկակ կ'ըսուին՝ որ յերկորդ տարր, բարաց կը բաղկանան. ինչպէս քրորոկ նատրնի, իսկութիւնը, և այլն: Երկար կ'ըսուին՝ որ երեք տարրերներէ կազմուած են, այսինքն է յածխածնէ, 'ի յրածնէ և 'ի թթուածնէ. օրինակ իմն շաբար, ճարպ, ոգեղէն ըմպելիքներ. և այլն: իսկ քանուկ՝ անոնք որ յածխածնէ, 'ի յրածնէ, 'ի թթուածնէ և 'ի որորախածնէ կը ձեռան. այսպէս օրինակի համար միս, ծուկ, կաթ, հաւկիթ, և այլն: Բայց կը յաւելունք որ վերոյիշեալ կերակրոց մէջ այլ և այլ քանակութեամբ զանազան աղային նիթեր անպական են, և միշտ անոնց հետ խառն կը գտնուին:

Կերակրոց ուրիշ բաժանում մ'ալ որ իրենց յատկութեանց և գործարանաց փրայ կատարած ազդեցութեանց նկատմամբ կ'ըլլուի Շետեեալն է. Կազմակերպից, ընչափանք և յաշակին: Համակերպից կոչուածն քառակակ կերակրութեան են. և այսպէս կ'անունին փառն զի մարմնոյն զանազան հիւսուածքն կը պատրաստեն, այս տեսակ կերակուրք են, օրինակ իմն, միս, հաւկիթ, կաթ: Շնչակեր մասնաւոր սնունդ մի չեն տար ուղղակի, այլ չնչառութեան աժխածին և յրածին կը մասակարաբեն. որով և հետևեարար աժխածնական թթուուս և յրելին գորոյի կը ձեռանյ, զորս չնչարձակութեամբ կ'արտավասենք. այսպէս օրինակ, ոգեղէն ըմպելիքը: Խոկ յդային կը կոչուին այն կերակուրներն որք իրենց ազդեցութիւնը ուզզակի աննիւն ծառայող գործարանաց փրայ կը կատարեն, և մին. չև աստիճան մի անօթութեան զգացումը կը տկարացընեն, ինչպէս սուրճ, թէյ:

12. Քայոց. — Քայզըն ներքին զգացում մի է որ կերակուր ուտելու զմեղ կը բռնազատէ. և զանազան աստիճաններ ունի: Նախ և առաջ կերակուր ուտելու այն սովորական յօժարութիւնն, որ յայլ և այլ պատճառաց ազդեալ և մտնամոր 'ի սովորութիւնէ կը գգտակ, քայզի առաջին աստիճանն է և սփորդ կը կոչուի: Խոկ շափազանց, կամ թէ ըսենք անյազ քայզն, որ չնքաղ կ'անուանի, ասոր երկորդ աստիճանն է: Հուսկ ուրեմն, երբ գործարանաց խանդակումն և ցաւ կը պատճառէ, որով և կենաքանին կը բռնազատուի անսովոր կերակուրներ ուտելու խաւուի կ'ըսուի:

Մինչ այցար գել շըրբան որոշակի իմանալ թէ արդեօք այս զգացողութեան տեղին՝ գործարանաց որ մասին մէջ է: Բազմամթիւ ինառամք կը կարծեն թէ հաւանարէն 'ի սոսամքսն

ըլլայ, բայց անսույզ է բոլորովին. վասն զի կան կենականիք որ սոսամքս շոնին և այսու հանդերձ քաղց կը զգան. և կամ վնասակար հւանդադութեանց պատճառաւ կենդանուոյ մը սոսամքսն բոլորովին կրնայ եղծանիլ, այնու հանդերձ ինչն քաղց կ'իմունայ: Վահայն այսու ամենայնին հաւանարէն կրնան ենթապերէ՝ որ քաղցի զգացումն մարտողութեան ժառացոյ լըդաց գրգռամանէն յառաջ գայ:

13. Ծարաւ. — Ծարաւն ալ քաղցի նման ներքին զգացում մի է, և զմեղ ջուր խմելու կը բռնազատէ. ինչպէս միւտոյն՝ նոյնպէս նաև ասոր մերձակայ պատճառաը մեզ զիսովին անծանօթ է: Քաղց' աւելի յանափի կը պատահի քան թէ ծարաւը. Երեւենն ստամորփ լիսութենէն էնին կը արակալը լուծուելու կարուութենէն յառաջ կու գայ. Երեւենն ալ արեան ջրային մասնց կորուաէն կը ծագի: Այն կենդանիք որ տողային մեծամեծ գեղձեր ունին՝ քիչ ջուր կը խմեն. և անոնցմէ ունինք գրեթէ ամեննեկին ծարաւ չեն զգար: Բազմաթիւ բնափառք կարծեցին որ այս զգացողութիւնն ըերին և գրակալ ասոյգ կ'ըսուի մ'ըլլայ: Վահայն ծարաւն ժարագի ներքին որ այս զգացողութիւնն ըերին և գրակալ ասոյգ կ'ըսուի մ'ըլլայ:

14. Բաժանումն սենեդեան գործանուրեանց. — Սնունդն այլ և այլ գործանութեանց ձեռոք կը կատարուի, զորս հետևեալ կերպով կը տեսնուի որ առաջ վերոյիշեալ գործարանաց շուրջ հասցընելու, որից միջներ ալ հաւասարապէս զծարաւ կը շիջուցանեն: Ուրեմն աւելի հաւանական է որ և այս ջրային երեւեցի մ'ըլլայ:

#### Ա. Ռւնեկուրին.

Բ. Ծարողուրին.

Գ. Լորձակուրին.

Դ. Եղուուրին.

Ե. Խափացուն.

#### Զ. Մամացուն.

Է. Արեան շրան.

Ծ. Շնչառուրին.

Թ. Զառուցուն.

Ժ. Խրացուն.

#### Ա. Ռւնեկուրին.

15. Ռւնեկուրին. — Ռւնեկուրին կ'ըսուի այն գործանութիւնն որով կենդանիք իրենց կերակուրը կ'առնուն, կամ ուղղակի բերնով, և կամ այս պաշտօնիս համար սահմանեալ յատուկ գործարաններով:

Որովհետեւ մննդարար կերակուրք այլ և այլ տեսակնեն, և միանդամայն զանազան զատու կենդանեաց գործարաններու կազմութիւնն յիրեաց մեծամքս կը տարբերին, այն պատճառաւ իրենց ունելութիւնն ևս բազմատեսակ է: Ի կենդանեաց ումանք ազատ են և իրենց կերակուրք կը գտնեն, և մնազդմամբ կամ ընտրողութեամբ զայն կ'որոշեն: Խակ այլք լըդաց

տակ սևեռեալ անշարժ կը կենան (Զե 12), և անոնց մէջ գտնուող առկախեալ կամ լուծուած նիթերէ իրենց սնունդը կ'ընդունին:


  
կան բազմաթիւ կենդանիք՝ թէ հաստատնովք և թէ հեղանիթովք կ'ապրին (Զե 13). ինչպէս կան դարձեալ քանի մը տեսակք որ սոսկ հեղանիթովք կը մասնին (Զե 14): Այսպատճառական առաջնորդ բերնի կազմութեան յետնոց բերնի կազմութեան մեծապէսկիլը տարրերի Առաջնոցն որպէս զի կարենան հաստատուն նիւթեր տանիլ իրենց բերանը, շափառորապէս կրնայ բացուիլ . իսկ յետնոցն զի հեղանիթու դիւրաս ծծել կարենապէ համար՝ պատճէ կամ ծծիչ գործարանէ և կամ կտուցէ կը բազկանայ:

Հուսկ ուրեմն, կան կենդանիք որ միայն բռնակեր կամ սոսկ մասկեր են: Արդ յայտ է ամենուն որ բյութը չեն կարող կերպով մը անձնական պաշտպանութիւն ընել, և երկրիս վրայ հաստատուած ըլլալով զիրենք փնտուող կենդանեաց ձեռքէ փախչելու կարողութիւն



Զե 15. Շերտ


շոնին. մինչդեռ այն կենդանիք որ ուրիշ կենդանեաց որս պիտի ըլլան՝ ամենայն կերպով իրենց թշնամեացմէ փախուստ կը ֆնտուն, որով և հետեւաբար խոտակերաց (Զե 16) և Ար-



Զե 16. Այգաթէթեառ


ակերաց (Զե 16) մէջ մեծամեծ տարրերութիւնք կը նկատեն: Մասկեր կենդանեաց ըզդայարաններն աւելի կատարեալ են, և շարժմանց մէջ խոտակեր կենդանեացմէ շատ աւելի

երագ, որպէս զի կարենան իրենց որաք դիւրաւ գոնին և վրան յարձմկելով զայն բռնել. դարձեալ մասկերը անձնական պատպանութեան համար այլ և այլ միջոցներու ունին, և անոնցմով իրենց որսը ուրիշներու ձեռքէն կ'ապահովցընեն, մինչդեռ խոտակերը լինդհակառակն զուրկ են բոլորպին այս միջոցներէն: Ահասասիկ այս զանազանութեանց պատճառաւ կենդանեաց ունելութեան գործարաններն ալ յիրերաց կը տարրերին:



Զե 17. Խոտակեր (Կով)

Պարդու և կապկի (Զե 17) ունելութեան գործարանքն ձեռքերն են. Թութակաց (Զե 18), Յափշտակիչ թաշնոց, Վահւծոց և Վագերց՝ ոսքերն. Զիերու, Եզանց, Ուխարաց, Ուզուց՝ երկայն և շարժական լիթուններն. Թաշնոց՝ կտուցն. Փղաց՝ պատիճն (Զե 19). իսկ Արշնաքաղից և Փայտփորներու (Զե 20) իբրուն:



Զե 18. Մասկեր (Կով)

Ինչպէս կերպուց, նոյնպէս դարձեալ և ըմպելեաց առումը՝ զանազան դաստի կենդանեաց մէջ պէս պէս եղանակով կը կատարուի: Յումանս ծծմանի, այս ինքն է օգէն՝ դաստարկացեալ բերնի մէջ հեղանիթ մը ձգելով. այս դիւրաց մէջ թերանն օրածիկ լինանի պաշտոն կը կատարէ, և լիզուն իրը շարժական միոց կը համարուի: Յայս շնորհութեամբ կամ ընկամաք բերանց. այս դէպիսն մէջ ողն չի դաստարկիր, այլ զայն բերնի մէջ հաւաքելով յետոյ ջրայ հետ ՚ի միասն ոգ ալ կը չնչեն. ասկից ահա տեսակ մը ծայն և կարկաջանկ յառաջ կու գայ երր գա-

ւաթով խմած հեղանիթնիս մեր լրիտուկն ամբ բողջապէս շթանաց : Հուսկ ուրեմն, Շաղղակեր Սոնաւողք, քանի մի կրծողք, և այն, գլուր կը բափեն, այս ինքն է՝ զայն լեզուաւ վեր կը ձգեն . այս դիպաց մեջ ըմսող կենդանին զիւղուն իր դգալ կը գործածէ, զայն ոլորելով և

երագութեամբ վեր հանելով, որպէս զի դհեղանիւթը թերնի մէջ ամփոփէ : Բայց այս յետին եղանակս միայն այն կենդաննեաց վրայ կը նկատենք՝ որք քիչ հեղանիթով իրենց ծարաւը կը շինուցանեն :

Դառնալով վիրաստին կերակրոց վրայ, ասոնք




Զե 17. Շաղղակեր կապիկ



Զե 18. Թռվթակ

մի անգամ բերան մոնելէ ետև, կենդաննեաց բազմաթիւ տեսակները զանոնք ծափողութեան և լորձնահոսութեան կ'ենթարկեն :

16. Բերեի գլխաւոր մասունքը . — կենդանաւական բարձրագոյն զասաւ կենդաննեաց բեր, նի գլխաւոր մասունքն են (Զե 21. տե՛ս յէջ 96),



Զե 19. Փղէ պատիճ



Զե 20. Փայտփոր

'ի վերնակողման վերին ժնօս, քիմք և պատրաստքաց . 'ի ստորակողման՝ ստորին ժնօս և լեզուկողմանկի՝ յառաջակողմը՝ յետակողմը՝ ստուգմաքրան կամ բերանային խո-

սոյի յետին մասն . Հուսկ ուրեմն ծափողութեան գործարանք, կամ թէ ըսենք առանձնեց և տողուկ հոսեցընադ անցքերու քիրանենք :

Կը շարունակուի :

Հ. ՊԱՒՂՈՍ ԳԱԶԹԱՆ